

ԿԱՆԽԵՆՔԱԴՐՈՒՅԹԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Խոսելով կանխենթադրույթի մասին՝ նախ և առաջ հարկ է նշել, որ այս երևույթը ունի փիլիսոփայական ակունքներ: Կանխենթադրույթը լոջոդեն սկսել է գրավել լեզվաբանների ուշադրությունը միայն անցյալ դարի 60-70-ական թվականներին, ինչը պայմանավորված է գործաբանության կտրուկ զարգացմամբ: Կանխենթադրույթի մասին առաջին ակնարկները նկատվել են այնպիսի փիլիսոփաների աշխատություններում, ինչպիսիք են Ֆրեգեն և Սթրոուսոնը: Եվ զարմանալի չէ, որ երբ լեզվաբանները սկսեցին ուսումնասիրել այս երևույթը, նրանց համար որպես հիմք ծառայեց փիլիսոփաների ժառանգությունը: Կանխենթադրույթին են նվիրված այնպիսի լեզվաբանների աշխատություններ, ինչպիսիք են Լ. Զարթուսենը և Ս. Փիթերսը (L. Karttunen and S. Peters 1979), Ռ. Զեմփսոնը (R. Kempson 1975), Դ. Ուիլսոնը (D. Wilson 1975), Ջ. Գազդարը (G. Gazdar 1979), Ջ. Դ. Ֆոդորը (J.D. Fodor 1979), Ռ. Սթալնեյքերը (R. Stalnaker 1974), Ջ.Դ. Ատլասը (J. D. Atlas 1979), Դ. Փ. Գրայսը (H. P. Grice, 1967, 1975, 1970, 1981), Լ. Հորնը (L. Horn 1972, 1973, 1978, 1990a), Ջ. Ս. Սադոկը (J. M. Sadock 1972, 1975a, 1975b, 1976, 1978) և այլոք: Սկսած Փոլ և Քերոլ Կիփարսկիներից մի շարք լեզվաբաններ առանձնացրել են նախադասության որոշ հատկանիշներ, որոնք պարունակում են որոշ բառային և շարահյուսական կառույցներ, և նույնացրել են նրանց նախադասության կանխենթադրույթի հետ: Համաձայն այս լեզվաբանների՝ սրանք պրոպոզիցիաներ են, որոնք արտակա չեն արտահայտվում նախադասության մեջ, բայց որոնք կանխենթադրվում են:

Որքան էլ, որ կանխենթադրույթի շուրջ առկա տեսությունները տարբեր են իրարից, նրանց մեջ առկա է մի ընդհանուր գիծ, այն է, որ կանխենթադրույթները կազմում են իմաստի այնպիսի շերտ, որը տարբերվում է բառային կամ շարահյուսական իմաստաբանությունից: Այսինքն՝ կանխենթադրույթը սերտորեն կախված է այն համատեքստից, որտեղ արտաբերվում է: Կանխենթադրույթի նկատմամբ լեզվաբանների մեծ հետաքրքրությունը պայմանավորված է նախ և առաջ նրանով, որ սկզբնապես այն դիտվում էր որպես զուտ իմաստաբանական երևույթ: Այսինքն՝ այն իմաստը, որը քաղվում էր նախադասությունից, դիտվում էր որպես նրա հատկանիշ: Սակայն հետագա ուսումնասիրությունները, գործաբանության զարգացման հետ մեկտեղ, հանգեցրին այն եզրակացությանը, որ ասույթի, հետևաբար և կանխենթադրույթի իմաստը ստացվում է մի շարք գործաբանական գործոններից, խորքային

կառույցից: Այսինքն՝ այն հաղորդակցական իրավիճակից, որտեղ տեղի է ունենում գործունեությունը, նրա մասնակիցներից (հաշվի առնելով նրանց տարիքը, սոցիալական կարգավիճակը, կենսափորձը, մասնագիտությունը և այլն), ժամանակից, շրջակա պայմաններից և այլն:

Հետևաբար՝ ձևավորվում են երկու տիպի կանխենթադրույթային տեսություններ՝ իմաստաբանական և գործաբանական: Իմաստաբանական տեսությունների առանցքային գաղափարը այն է, որ նախադասության իմաստը նրա բաղադրիչ մասերի իմաստների պարզունակ հանրագումարն է, իմաստը կայուն է և զգայուն չէ համատեքստային գործոնների փոփոխության նկատմամբ: Այս տեսակետից կարելի է ասել, որ իմաստաբանական տեսությունները բառային և քերականական իմաստի կողմնակից են: Սակայն գործաբանության զարգացումը և դիսկուրսի ոլորտում կատարված ուսումնասիրությունները հետզհետե երևան հանեցին կանխենթադրույթի գործաբանական բնույթը: Իմաստաբանական տեսությունները այս տեսանկյունից դարձան ոչ բավարար և որոշակիորեն անուշադրության մատնվեցին: Առաջ եկավ մի նոր տեսության անհրաժեշտություն, որը կկարողանար իմաստը քաղել թե՛ բառային իմաստից, թե՛ համատեքստային գործոններից: Լեզվաբանության մեջ վերը բերված՝ կանխենթադրույթի երկու հիմնական տեսությունները կենտրոնացած են հետևյալ հասկացությունների շուրջ՝

1. *Կանխենթադրույթները որպես կոնվենցիոնալ իմպլիկատուրաներ* (այստեղ գերիշխում են իմաստաբանական տեսությունները): Համաձայն այս մոտեցման՝ նախադասության կանխենթադրույթը դիտվում է որպես նախադասության ամբողջական բովանդակության փաթեթի մեկ բաղկացուցիչ մաս: Այս մոտեցումը վերագրելի է Լ.Քարթթունենին և Ս. Փիթերսին (L. Karttunen and S. Peters 1979), ինչպես նաև Ջ.Գազդարին (G. Gazdar 1979): Տարբերությունը կայանում է նրանում, որ Քարթթունենը և Փիթերսը օգտագործում են կոնվենցիոնալ իմպլիկատուրա տերմինը, մինչդեռ Ջ. Գազդարը օգտագործում է կանխենթադրույթ տերմինը: Այստեղ կարևորը իհարկե ոչ թե տերմինաբանությունն է, այլ դրա ետևում ընկած հասկացությունները:

2. *Կանխենթադրույթները՝ որպես ներանցնելու պայմաններ* (այստեղ գերիշխում են գործաբանական տեսությունները): Այսպիսի մոտեցման կողմնակիցներն են Ռ. Սթալնեյքերը (R. Stalnaker 1973, 1974, 1979), Լ. Քարթթունենը (L. Karttunen 1974), Ի. Հեյմը (I. Heim 1983) և այլք: Այս մոտեցումը ենթադրում է, որ ասույթով կանխենթադրված պրոպոզիցիաները պետք է ներակա լինեն այն համատեքստի ընդհանուր գիտելիքում, որը ներմուծում է այդ ասույթը: Կանխենթադրույթի այս հասկացությունը հիմնված է ընդհանուր գիտելիքի գաղափարի վրա: Համատեքստի ընդհանուր գիտելիք է համարվում բոլոր այն

պրոպագիաների ամբողջությունը, որոնք ընկալվում են խոսակիցների կողմից որպես փոխադարձաբար հայտնի:

Այժմ մի քանի օրինակով փորձենք պարզաբանել, թե ինչ են վերը բերված երկու մոտեցումները իրենցից ներկայացնում: Օրինակ ենթադրենք, որ ունենք մի համատեքստ, որի ընդհանուր գիտելիքից հետևում է, որ Աննան ճամբարում էր: (Այսուհետ հակիրճ լինելու համար «համատեքստի ընդհանուր գիտելիքից հետևում է հետևյալ պրոպագիայի» փոխարեն կասենք «համատեքստից հետևում է...»): Նշված համատեքստում արտաբերվում է հետևյալ նախադասությունը՝

/1/ Արմենը նույնպես ճամբարում էր:

Համաձայն առաջին տեսության, այսինքն՝ որ կանխենթադրույթը կոնվենցիոնալ իմպլիկատուրա է, այս նախադասությունը տեղեկացնում է, որ Արմենը ճամբարում էր (սա նախադասության բովանդակությունն է), բայց այս նախադասությունը նույնպես տեղեկացնում է, որ բացի Արմենից ինչ-որ մեկը նույնպես ճամբարում էր (սա նախադասության կանխենթադրույթն է): Եթե խոսակցությունը շարունակվի առանց միջամտության, այսինքն՝ առանց ավածը կասկածի տակ դնելու, այս երկու տեղեկությունները բնականոն կավելանան ընդհանուր գիտելիքին, որի հետևանքով կառաջանա մի նոր ընդհանուր գիտելիք՝ կազմված նախորդ ընդհանուր գիտելիքից նոր տեղեկության հավելմամբ: Իհարկե այստեղ կանխենթադրույթի ավելացումը ավելորդ է, քանի որ նախորդ համատեքստից դա արդեն հետևում էր:

Երկրորդ մոտեցման, այսինքն՝ կանխենթադրույթները որպես ներանց-նելու պայմաններ, շրջանակներում կլինի այսպես. երբ /1/-ը արտաբերվում է մի համատեքստում, մենք նախ և առաջ պետք է պարզենք, թե արդյոք այդ համատեքստից հետևում է, որ Արմենից բացի ինչ-որ մեկը նույնպես ճամբարում էր: Ենթադրենք՝ այո: Եթե այդպես է, ապա համատեքստը կընդունի նախադասությունը, ինչը նշանակում է, որ միջամտության բացակայության դեպքում, այսինքն՝ եթե ոչ ոք չառարկի, նախադասության բովանդակությունը (այստեղ՝ Արմենը գնացել է ճամբար) կավելացվի համատեքստին՝ ձևավորելով նոր ընդհանուր գիտելիք: Այստեղ ակնհայտ է, որ ինչպես և նախորդ մոտեցման դեպքում ձևավորվում է «ցանցի» էֆեկտ: Այսինքն՝ որ մենք համզում ենք մի նոր համատեքստի, որից հետևում է այն ամենը, ինչ-որ հետևում էր հինից՝ հավելած այն, որ Արմենը ճամբարում էր:

Բնական է, որ այս երկու մոտեցումները կտարբերվեն, եթե այդ նույն /1/ ասույթը առկայացվի մի համատեքստում, որից դեռ չի հետևում, որ Աննան կամ մեկ ուրիշը ճամբարում էր: Փորձնական ընդունենք մի ընդհանուր գիտելիք, որը չեզոք է այս տեսանկյունից: Այսինքն՝ որից չի հետևում, ոչ այն, որ ինչ-որ մեկը, բացի Արմենից ճամբարում էր, ոչ ընդհանրապես, որ բացի նրանից

ինչ-որ մեկը ճամբարում էր, ոչ էլ նույնիսկ այն, որ Արմենը իսկապես ճամբարում էր, թե՛ ոչ: Առաջին մոտեցման համար ոչինչ չի փոխվի: Ընդհանուր գիտելիքին կավելանա նախադասության և՛ բովանդակությունը, և՛ կանխենթադրույթը: Բայց այս դեպքում այն արդեն ավելորդ չի լինի, ինչպես նախորդ դեպքում, որովհետև այն նոր է ավելացվում:

Ինչ՞ է տեղի ունենում երկրորդ մոտեցման շրջանակներում: Նախ և առաջ անհրաժեշտ է ստուգել, թե արդյո՞ք համատեքստից հետևում է վերոհիշյալ կանխենթադրույթը: Եվ ինչպես արդեն նշել էինք, չի հետևում: Այսպիսով համատեքստը չի ընդունում նախադասությունը և մենք կանգնում ենք արգելքի առաջ: Եթե բարեբախտաբար ինչ-որ մեկը հարցնի. «Իսկ ինչ՞ ի նկատի ունես ասելով նույնպես», խոսողը հնարավորություն կունենա լրացնել բացը և ավելացնել կանխենթադրույթը, որից հետո միայն խոսակցությունը բարեհաջող կշարունակվի: Այս օրինակը ակնհայտ է դարձնում, թե որքան բազմիմաստ ու բազմերանգ է դիսկուրսի ոլորտը, խոսքային մշանակության ոլորտը:

Այստեղ բնականոն ծագում է մի հարց. որ՞ մոտեցումն է ի գորու տալ կանխենթադրույթի ճիշտ էմպիրիկ կանխատեսում: Առաջին հայացքից կարելի է ասել, որ երկրորդը, սակայն առաջին մոտեցման կողմնակիցները բերում են մի շարք օրինակներ ապացուցելու, որ բացակայող կանխենթադրույթը չի խանգարում, որպեսզի խոսակցությունը հաջողակ շարունակվի: Օրինակ՝ եթե ինչ-որ մեկը ուշացած գալիս է և ասում.

1/2 «Ներեցեք ուշանալու համար: Մեքենաս անսարք էր»,

ոչ ոք չի պատասխանի. «Ինչ՞ ի նկատի ունեք՝ ասելով մեքենաս: Դուք երբեք չեք ասել, որ մեքենա ունեք»: Աա ուղղակի կընդունվի որպես նորություն, ինչպես դա արվեց առաջին մոտեցման դեպքում (G. Gazdar 1979):

Բայց երկրորդ մոտեցման հետևորդները նույնպես անտեղյակ չէին այսպիսի դեպքերի մասին: Դ. Լյուիսը գրում է.

«Այդքան էլ հեշտ չէ, որքան կարող է թվալ, ասել մի բան, որը անընդունելի կլինի անհրաժեշտ կանխենթադրույթների բացակայության պատճառով: Ասեք որևէ բան, որը պահանջում է բացակայող կանխենթադրույթ, և անմիջապես այդ կանխենթադրույթը անսպասելիորեն կառաջանա՝ ձեր ասածը, ամեն դեպքում, դարձնելով ընդունելի: Կամ գոնե այդպես է պատահում, եթե ձեր խոսակիցները լուր համաձայնվում են» (D. Lewis 1979, p. 348):

Պրոպագանդայի այսպիսի անսպասելի ավելացումը ընդհանուր գիտելիքին, որը դրդված է հենց ասույթի արտաբերմամբ և որը այլ կերպ չէր ընդունվի, կոչվում է *հարմարեցում*: Եթե հարմարեցումը կարող է հեշտությամբ օգտագործվել որպես բացակայող կանխենթադրույթները լրացնելու միջոց, ապա գործնականորեն առաջին մոտեցման տարբերակումը երկրորդից դառնում է շատ դժվար: Փաստորեն, ոմանք եկել են այն եզրակացությանը, որ սա

երկրորդ մոտեցումը դարձնում է «դատարկ», որը համարժեք է դրա պարտությունը ընդունելուն (G. Gazdar 1979):

Այս եզրահանգումը, կարծում եմ, վաղաժամ է, եթե հաշվի առնենք երկու կարևոր համագամանք: Եթե նույնիսկ այս երկու մոտեցումները տալիս են նույնաման արդյունքներ առանձին վերցրած օրինակների համար, նրանք անկասկած կտարբերվեն, երբ խոսքը գնա կանխենթադրույթի կարևորագույն հատկանիշներից մեկի՝ համադրման խնդրի մասին: Այս տեսանկյունից երկրորդ մոտեցման առավելությունը կդառնա ավելի, քան ակնհայտ:

Երկրորդ պատճառը կապված է այն սկզբունքային սահմանափակումների հետ, որոնք պարտադրված են առաջին մոտեցման դրույթներով, այն է՝ թե ինչ կարող է կանխենթադրվել այս կամ այն նախադասությունից (R. Stalnaker 1973, S. Soames 1989): Ռ. Սթալնեյքերը առաջինն էր, ով խոսեց այս երևույթի մասին, սակայն գալիք ուսումնասիրությունը հիմնված է Ս. Սոամսի (S. Soames 1989) և Ի. Հեյմի (I. Heim 1983b) կողմից *նույնպես* մասնիկի շուրջ կատարված ուսումնասիրության վրա:

Մինչ այս պահը մենք հաստատում էինք, որ /1/ նախադասության մեջ նույնիսկ մասնիկից կանխենթադրվում է, որ Արմենից բացի ինչ-որ մեկը *նույնպես* ճամբարում էր, այսինքն՝ գոյութենական կանխենթադրույթ: Սակայն իրականում դա երևույթի գերպարզեցում է: Տեսնենք, թե ինչ ազդեցություն կարող է թողնել /3/ նախադասության անսպասելի արտաբերումը.

/3/ Ձոնը *նույնպես* մեկնեց Զարվարդ:

Այս նախադասությունը լսողի առաջին ռեակցիան կլինի. «Ի՞նչ ի նկատի ունեք ասելով *նույնպես*»: Եթե նույնիսկ լսողը դա չասի բարձրաձայն, ապա նա անպայման կմտածի «Ի՞նչ ուրիշ Զարվարդի շրջանավարտ(ներ) ի նկատի ունենք»: Իհարկե և՛ խոսողը, և՛ խոսակիցը քաջատեղյակ են, որ հարյուրավոր մարդիկ մեկնել են Զարվարդ, այսպիսով այն, որ բացի Ձոնից գոնե ինչ-որ մեկը *նույնպես* մեկնել է Զարվարդ, ենթադրաբար կազմում է ընդհանուր գիտելիքի մի մաս: Սակայն լսողի ռեակցիան ցույց է տալիս, որ գոյութենական կանխենթադրույթի գոյությունը բավարար չէ ասվածը համատեքստի մեջ հաջողակ ներմուծելու համար, և անհրաժեշտ է հավելյալ ինչ-որ բան /3/-ը հարթ համատեքստի մեջ ներմուծելու համար:

Այս օրինակից կարելի է հետևություն անել, որ ավելի ճիշտ կլինի ասել, որ /3/-ը պահանջում է մի համատեքստ, որից հետևում է, որ գոյություն ունի մի կոնկրետ x (որը մի անձնավորություն է կամ մարդկանց մի խումբ), որը հստակ առանձնանում է համատեքստում, և բացի այդ կանխենթադրվում է, որ այդ x -ը Ձոնը չէ և այդ x -ը մեկնել է Զարվարդ: Այսպիսով այստեղ անհրաժեշտ է, որ ընդհանուր գիտելիքից հետևի ոչ թե գոյութենական կանխենթադրույթ, այլ մի կոնկրետ պրոպոզիցիա: Այսինքն՝ միայն այն, որ համատեքստից հետևում է, որ

գոյություն ունեն Զարվարդի շրջանավարտներ, բավարար չէ /3/-ը ընդունելու համար: Օրինակ՝ հարմար կլինի այնպիսի մի համատեքստ, որտեղ արդեն խոսվել է Զարվարդի որոշ շրջանավարտների մասին, կամ եթե լսողները հայտնի են որպես Զարվարդի շրջանավարտներ:

Նույնպես մասնիկից բխող կանխենթադրույթի վերաբերյալ այս ավելացումից բխում է երկու բան: Նրանց համար, ովքեր երկրորդ մոտեցման կողմնակից են, այս ավելացումը պարզաբանում է, թե ինչու վերը բերված երկրորդ մոտեցման շրջանակներում /1/-ը հեշտությամբ չընդունվեց հարմարեցման միջոցով, ինչպես օրինակ /2/-ը: /1/-ի խնդիրը կայանում է նրանում, որ որքան էլ համագործակցական լինեն խոսակիցները և որքան էլ ցանկանան ավելացնել /1/-ը, նրանք պարզապես չգիտեն, թե որ պրոպոզիցիան ավելացնեն այն բոլոր հնարավոր պրոպոզիցիաներից, որոնք կարող են ներմուծել /1/-ը համատեքստի մեջ: Սրան հակառակ, /2/-ը այսպիսի կասկածի տեղիք չի տալիս: Բացակայող կանխենթադրույթը հեշտությամբ որոշվում է նախադասությամբ, այն է, որ խոսողը մեքենա ունի:

Կանխենթադրույթի առաջին մոտեցման համար նույնիսկ մասնիկի վերաբերյալ կատարված այս ավելացումը որոշակի խնդիրներ է առաջացնում, այն է, թե ո՞րն է նույնիսկ մասնիկ պարունակող նախադասության կոնվենցիոնալ իմպլիկատուրան: Ինչպես տեսանք, նախադասությունը պարզապես չի հաղորդում գոյութենական մի կանխենթադրույթ: Այդ դեպքում ծագում է մի հարց. կա՞ արդյոք մեկ այլ պրոպոզիցիա, որը հաղորդվում է այդ նախադասությամբ: Եթե ոչ, ապա, ինչպես Ռ. Սթալնեյքերն է հաստատում, անիմաստ է այս իրավիճակի ուսումնասիրությունը առաջին մոտեցման շրջանակներում, և միանգամայն տեղին է դրա ուսումնասիրությունը երկրորդ մոտեցման տեսանկյունից, ինչը և ամուր հիմք է ապահովում հաստատելու, որ կանխենթադրույթները ավելի շատ ներանցման պայմաններ են, քան կոնվենցիոնալ իմպլիկատուրաներ:

Այս ամենը գալիս է ապացուցելու, որ կանխենթադրույթը հասկանալու համար դրա մեկուսացված ուսումնասիրությունը բավարար չէ, այն պահանջում է ավելի խորը ուսումնասիրություն՝ կապված կանխենթադրույթի իմաստաբանությունից դիսկուրսի մեջ:

Գրականության ցանկ

1. Levinson, S. (2002). *Pragmatics*. Cambridge: Cambridge University Press.
2. Choon-Kyu Oh, David A. Dinneen. (1979) *Syntax and Semantics*, Volume 11: Presupposition. New York: Academic Press.
3. Lewis, D. (1979). Scorekeeping in a language game. *Journal of Philosophical Logic* 8, 339–59.
4. Stalnaker R.C. Presuppositions // *Journal of Philosophical Logic*. – 1973. – #2. – p. 447–457.
5. Karttunen, L. and Peters, S. (1979). Conventional implicature. In Oh and Dinneen, eds., 1–56.
6. Karttunen, L. 1974. Presupposition and linguistic context. *Theoretical Linguistics* 1:181–194.